

Գևորգ Բաղդասարյան

ԵՊՀ քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի հայրերը

ՄԵՂԱԳՐՈՂԻ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԴԱՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱՑՎԱԾ ԿԱՐԳԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՊԱՅՄԱՆ

Գատական քննության արագացված կարգը՝ որպես դատական քննության փուլում դատավարական ձևի տարբերակման դրսևորում, կիրառվում է միայն օրենքով նախատեսված պայմանների առկայության դեպքում: Գրանցից առավել խնդրահարույց պայմաններից մեկը մեղադրողի համաձայնությունն է արագացված կարգ կիրառելու վերաբերյալ:

Այսպես, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 375.1-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «եթե մեղադրողը մեղադրական եզրակացությունում չի առարկել արագացված կարգ կիրառելու դեմ, ապա ամբաստանյալը կամ մեղադրյալն իրեն առաջադրված մեղադրանքի հետ համաձայնվելու դեպքում իրավունք ունի միջնորդելու արագացված դատական քննության կարգ կիրառելու մասին այն հանցագործություններով, որոնց համար Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով նախատեսված պատիժը չի գերազանցում 10 տարի ժամկետով ազատազրկումը:

Մինչև դատաքննությունն սկսվելը մեղադրողը դատարանի առաջարկությամբ կարող է իր դիրքորոշումը փոխել, թեպես արագացված կարգ կիրառելու դեմ առարկել է մեղադրական եզրակացությունում»:

Ինչպես տեսնում ենք, վերոնշյալ հոդվածում օգտագործվում է ոչ թե «համաձայնել», այլ «առարկել» եզրույթը: Հետևապես մեղադրողի առարկությունը հանդես է գալիս որպես արագացված կարգի կիրառման բացասական պայման, քանզի օրենսդիրը դրա կիրառումը կապում է մեղադրողի առարկության բացակայության հետ: Մեղադրողի կողմից չառարկելն ըստ էության նույնանում է նրա համաձայնության հետ:

Նախ, ուշադրություն հրավիրենք 375.1-րդ հոդվածի 1-ին մասի անհաջող ձևակերպման վրա: Նշված հոդվածի վերլուծությունը՝ դրա տառացի մեկնաբանությամբ, ցույց է տալիս, որ օրենսդիրն իրականում մեղադրողի չառարկելը համարում է ոչ թե արագացված կարգ կիրառելու, այլ մեղադրյալի կամ ամբաստանյալի կողմից դրա մասին միջնորդություն ներկայացնելու պայման: Այլ կերպ ասած՝ «եթե մեղադրողը մեղադ-

րական եզրակացությունում չի առարկել արագացված կարգ կիրառելու դեմ, ապա ամբաստանյալը կամ մեղադրյալն իրեն առաջադրված մեղադրանքի հետ համաձայնվելու դեպքում իրավունք ունի միջնորդելու...» ձևակերպումը նշանակում է, որ եթե մեղադրողը մեղադրական եզրակացությունում առարկել է արագացված կարգ կիրառելու դեմ, ապա մեղադրյալը (ամբաստանյալը) չի կարող այլևս միջնորդել դատական քննության արագացված կարգ կիրառելու մասին:

Հարց է առաջանում, թե ինչպես և ինչու պետք է դատարանը դատական քննության ժամանակ առաջարկի մեղադրողին փոխել իր դիրքորոշումը, կամ մեղադրողն ինչու պետք է փոխի այն, եթե մեղադրական եզրակացությունում առկա առարկության պատճառով գրկված լինելով նման իրավունքից՝ մեղադրյալը չէր էլ կարող նման միջնորդություն ներկայացնել:

Հետևաբար, «եթե մեղադրողը մեղադրական եզրակացությունում չի առարկել արագացված կարգ կիրառելու դեմ» և «մինչև դատաքննությունն սկսելը մեղադրողը դատարանի առաջարկությամբ կարող է իր դիրքորոշումը փոխել, թեպետ արագացված կարգ կիրառելու դեմ առարկել է մեղադրական եզրակացությունում» ձևակերպումները 375.1-րդ հոդվածի 1-ին մասի փոխարեն պետք է տեղ գտնեն նույն հոդվածի երկրորդ մասում, որը սահմանում է, թե երբ դատարանը կարող է դատական քննության արագացված կարգ կիրառել: Այսինքն՝ մեղադրողի չառարկելը պետք է հանդիսանա արագացված կարգ կիրառելու, և ոչ թե դրա վերաբերյալ միջնորդություն ներկայացնելու անհրաժեշտ պայման:

Նշենք, որ մեղադրողի դրական դիրքորոշման՝ որպես արագացված կարգ կիրառելու պարտադիր պայմանի գոյությունը միանշանակ չի ընդունվում: Մասնավորապես, Ի. Լ. Պետրուխինը գտնում է, որ մեղադրյալի՝ իր գործն արագացված կարգով քննելու իրավունքը չպետք է կախման մեջ դրվի կողմերից: Հեղինակի կարծիքով մեղադրանքի կողմը պետք է բավարարվի նրանով, որ մեղադրյալն ամբողջովին ընդունել է իր մեղքը և միջնորդել գործը քննել արագացված կարգով¹:

Վ. Վ. Օսինը մեղադրողի համաձայնությունը համարում է արագացված կարգի կիրառմանն էապես խոչընդոտող հանգամանք և առաջարկում է կատարել համապատասխան օրենսդրական փոփոխություններ,

¹ Ст. 1 § 1 п. 1 ст. 375.1 УК РФ. И. Л. Петрухин. «Уголовное судопроизводство». М.: Юристъ, 2005, № 7, с. 40:

որոնք թույլ կտան արագացված կարգը կիրառել միայն մեդադրայալի միջ-
նորդության հիման վրա¹:

Ե. Ա. Ֆիլիպովան չի ընդունում այս մոտեցումները՝ դրանք համա-
րելով քրեական դատավարության սկզբունքներին չհամապատասխա-
նող²:

ՀՀ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի
դատարանը ՀՀ Սահմանադրական դատարանում բարձրացրեց մեղադ-
րողի առարկության՝ որպես արագացված կարգի կիրառումը բացառող
հանգամանքի սահմանադրականության հարցը: Դիմումով վիճարկվել էր
քնարկվող դրույթի համապատասխանությունը դատարանի անկախութ-
յան, օրենքի առաջ բողոքի հավասարության և անձի իրավունքների և ա-
զատությունների դատական պաշտպանության արդյունավետ միջոցի ի-
րավունքի սկզբունքներին:

Խնդիրը դիտարկելով մրցակցության սկզբունքի համատեքստում՝
ՀՀ Սահմանադրական դատարանը 28.12.2010թ. թիվ ՄԳ-Ո 931 որոշմամբ
այն դիրքորոշումն է հայտնել, որ արագացված կարգի կիրառումը երկու
կողմերի փոխադարձ համաձայնությամբ պայմանավորելը ոչ միայն չի
խախտում մրցակցության սկզբունքը, այլև նման մոտեցումն արդարաց-
ված է հենց մրցակցային դատավարության տեսանկյունից: Սահմանադ-
րական դատարանը նշում է, նաև, որ գործող իրավակարգավորումը,
թույլ չտալով արագացված կարգի կիրառումն այդ հարցում դատավա-
րության կողմերից մեկի, տվյալ դեպքում՝ մեղադրողի, համաձայնության
բացակայության դեպքում, դրանով իսկ ապահովում է կողմերի հավա-
սարությունը (տե՛ս նշված որոշման 10-րդ կետը):

Դատարանի անկախության սկզբունքի հետ նման իրավակարգա-
վորման հարաբերակցության կապակցությամբ Սահմանադրական դա-
տարանը նշում է, որ «դատական քննության արագացված կարգ կիրա-
ռելու հարցի լուծման, ամբաստանյալի միջնորդության առնչությամբ ո-
րոշում կայացնելու գործընթացում դատարանի դատավարական անկա-
խությունը դրսևորվում է նման կարգ կիրառելու վերաբերյալ դատավա-
րության երկու կողմերի փոխադարձ համաձայնության պայմաններում

¹ Տե՛ս *Ի նե՛ի Բ. Ա., ×օի ռօթթօ իժե՛լ ճի՛նի՛թ ձ Թի՛ննե՛ն ին՛ի՛նի՛ ի՛ծյօ՛ե՛ձ նօճճճի՛նի՛ ժճճեժճօճեւնոճճ // Աճճի՛ ճօճ, 2006, № 6, էջ 33:*

² Տե՛ս *Օե՛ե՛լի՛ն Ա. Ա., Նի՛սօ՛ե՛թե՛ձ Օ-ճոճե՛յ իժի՛ճօժի՛ժ ձ ին՛ի՛նի՛ ի՛ծյօ՛ե՛ձ նօճ-
ճի՛նի՛ ժճճեժճօճեւնոճճ. Աճճի՛ թե՛ Ի՛ ԱՕ, 2008, № 83, էջ 118:*

դատական քննության արագացված կարգ կիրառելու՝ օրենքով նախատեսված պայմանների առկայությունը գնահատելիս: Սահմանադրական դատարանը նման իրավակարգավորումը համապատասխանող է համարել նաև իրավունքների դատական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքին, նշելով, որ արագացված կարգ չկիրառվելու դեպքում կիրառվում է դատական քննության ընդհանուր կարգը, որի ընթացում գործում են ինչպես ՀՀ Սահմանադրությամբ, այնպես էլ Եվրոպական կոնվենցիայով սահմանված բոլոր դատավարական երաշխիքները»(տե՛ս նշված որոշման 11-րդ կետը):

Ներկայացված հարցի կապակցությամբ Ա. Ղամբարյանը նշում է, որ եթե դատախազը առարկում է արագացված կարգի կիրառմանը, դա նշանակում է, որ դատախազը տվյալ գործով նախընտրում է ամբողջ ծավալով իրականացնել մեղադրանքի պաշտպանության գործառույթը, և այդ դեպքում դատարանը չի կարող մեղադրանքի պաշտպանության գործառույթի ծավալների վրա որևէ ներագրեցություն ունենալ: Մրցակցային դատավարության պայմաններում կողմերն են տնօրինում իրենց դատավարական լիազորությունների ծավալը, և դատարանը չի կարող միջամտել նշված գործընթացին: Եթե դատարանին օրենքով հնարավորություն տրվի դատախազի կամքին հակառակ գործի լուծումն իրականացնել արագացված կարգով, ապա նման կարգավորումը կհակասի ՀՀ Սահմանադրության 103-րդ հոդվածով նախատեսված՝ դատախազի՝ մեղադրանքի պաշտպանության սահմանադրական գործառույթին¹:

Քննարկվող պայմանի հետ կապված հիմնական վիճելի հարցը թերևս այն է, որ օրենսդրության մեջ ամրագրված չեն այն հանգամանքները, որոնց առկայությամբ կամ բացակայությամբ դատախազը չի կարող առարկել արագացված կարգ կիրառելու դեմ: Փաստորեն, ինչպես նշվում է գրականության մեջ, «արագացված կարգի դեմ և՛ առարկելը և՛ չառարկելը օրինական է²» :

Նշենք, որ ամերիկյան պլիբարգենի շրջանակներում դատախազը մինչև մեղքի ընդունման շուրջ համաձայնության գալը հաշվի է առնում

¹ Տե՛ս Ղամբարյան Ա., Արագացված դատական քննության դեմ առարկելու՝ դատախազի բացարձակ վետոյի սահմանադրականությունը. Դատական Իշխանություն, 2011, թիվ 4 (141), էջ 54:

² Տե՛ս Ղամբարյան Ա., Պողոսյան Տ., Դատական քննության արագացված կարգը Հայաստանի Հանրապետության քրեական դատավարությունում, Երևան, 2008, էջ 54:

հետևյալ հանգամանքները՝ արդյոք մեղադրյալը աջակցել է այլ անձանց կողմից կատարված հանցագործությունների քննությանը, առաջադրված մեղադրանքի բնույթը և ծանրությունը, մեղադրյալի մոտ զոջալու տարրերի առկայությունը, դատական քննության արդյունքում մեղադրական դատավճիռ կայացնելու հավանականությունը, մեղադրյալի կողմից վկաների վրա ներգործելու հնարավորությունը, մեղադրական դատավճիռ կայացնելու դեպքում հնարավոր պատժամիջոցը, վարույթում առկա այլ գործերը, որոնցով պահանջվում է արագ քննություն և այլն¹:

Ուստի, անհրաժեշտ է քրեական դատավարության օրենսգրքում ամրագրել արագացված կարգ կիրառելու վերաբերյալ դատախազի դիրքորոշումը պայմանավորող հանգամանքները՝ որպես այդպիսիք համարելով, մասնավորապես, գործի հանգամանքների բացահայտմանը, հանցակիցների մերկացմանը մեղադրյալի կողմից օժանդակելը, տուժողին պատճառված վնասի լրիվ հատուցված հատուցված լինելը և այլն:

Հակառակ դեպքում, արագացված կարգի դեմ առարկելը կամ չառարկելը որպես դատախազի հայեցողական լիազորություն մախատեսելով ստեղծվում է մի վիճակ, երբ օրենսդիրը քրեական դատավարությունն ավելի խնայողական ու արդյունավետ դարձնելու և քրեական գործերի՝ ողջամիտ ժամկետում քննությունն ապահովելու համար քրեական դատավարություն է ներմուծում դատական քննության արագացված կարգը՝ միաժամանակ դրա կիրառումը կախվածության մեջ դնելով պաշտոնատար անձի հայեցողությունից: Չէ՞ որ մինչև քննարկվող ինստիտուտի ամրագրումը ևս գործերը ողջամիտ ժամկետում քննելը կախված էր նաև վարույթն իրականացնող մարմնի հայեցողությունից, իր պարտականությունները բարեխիղճ կատարելուց:

Բացի այդ, դատախազի դիրքորոշումը պայմանավորող հանգամանքների օրենսդրական ամրագրումը թույլ կտա խուսափել այդ հարցի ենթաօրենսդրական կարգավորումներից, որոնք երբեմն էականորեն սահմանափակում են մեղադրյալի իրավունքները: Մասնավորապես, «ՀՀ դատախազության կոլեգիայի 2007թ. հոկտեմբերի 3-ի որոշման կատարումն ապահովելու մասին» ՀՀ գլխավոր դատախազի 01.11.2007թ. թիվ 63 հրամանի 1.6 կետի համաձայն՝ ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի մեղադրանքով միասնական պատժողական պրակտիկա կիրառե-

¹ Տե՛ս Նձաթբե՛իձ Ն. Ա., Օնե՛իձա՛ի՛իձ նո՛ձա՛ձի՛իձ ձձճճձձձձձձձձ: իձիձձձձձիձնո՛ւ, ձձձձձիձնո՛ւ, իձձձիձձձձձ. Ա՛ի՛իձիձնո՛ւ ձձիձձձձձձձձձձձձձձձձձձձձձ. Ի՛ ., 2006, էջ 25:

լու նպատակով պետք է բացառել նշված քրեական գործերով արագացված դատաքննություն իրականացնելը: Այս գործերով մեղադրական եզրակացությունը հաստատելու հետ միաժամանակ այնտեղ պարտադիր պետք է նշել դատական քննության արագացված կարգ կիրառելու դեմ առարկելու մասին:

Ակնհայտ է, որ այս ակտով սահմանափակվում են մեղադրյալի իրավունքները՝ ելնելով գերատեսչական շահից: Պետք է նկատել, որ արագացված կարգ չկիրառելու դեպքում նույնպես դատարանը կարող է նշանակել պատիժ, որը չի գերազանցում օրենքով նախատեսված առավել խիստ պատժի երկու երրորդը, քանի որ մեղադրողի կարծիքը պատժի նշանակման հարցում դատարանի համար որևէ նշանակություն չպետք է ունենա: Դատարանն է որոշում պատժի տեսակը և չափը՝ հաշվի առնելով հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանը և բնույթը, հանցավորի անձը բնութագրող տվյալները, այդ թվում՝ պատասխանատվությունը եւ պատիժը մեղմացնող կամ ծանրացնող հանգամանքները(ՀՀ քր. օր. հոդվ 61. մաս 2): Հարց է առաջանում, թե տվյալ դեպքում դատախազությունն ինչպես պետք է ձևավորի պատժողական պրակտիկա: Պատժողական պրակտիկա, որպես այդպիսին, ձևավորում է պատիժ նշանակող մարմինը՝ դատարանը:

Մեղադրողն իր առարկությունը ներկայացնում է մեղադրական եզրակացությունում: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 277-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հաստատելով մեղադրական եզրակացությունը՝ դատախազը գործն ուղարկում է այն դատարան, որին գործն ընդդատյա է: Դատական քննության արագացված կարգ կիրառելու դեմ առարկելու դեպքում դատախազը մեղադրական եզրակացությունը հաստատելու հետ միաժամանակ նշում է նաև այդ մասին:

Օրենսդիրը դատախազին պարտավորեցնում է մեղադրական եզրակացությունում նշել միայն արագացված կարգի դեմ առարկելու մասին և որպես արագացված կարգի կիրառման պայման՝ նախատեսում է «դատախազի չառարկելը»: Հետևաբար, ինչպես նշվում է գրականության մեջ, «եթե դատախազը մեղադրական եզրակացությունում չի առարկում արագացված կարգի կիրառման դեմ, ապա դա նշանակում է, որ նա համաձայն է արագացված կարգի կիրառմանը»: Այսինքն՝ դատախազի լռությունը դիտվում է որպես համաձայնություն: Ա. Գամբարյանի կարծիքով, դատախազը մեղադրական եզրակացությունը հաստատելիս պետք է հատուկ ընդգծի իր վերաբերմունքը արագացված կարգի կիրառ-

ման վերաբերյալ»¹: Այսինքն՝ դատախազը պետք է մեղադրական եզրակացությունում նշի և՛ առարկելու, և՛ չառարկելու մասին:

Մինույն ժամանակ Ա. Ղամբարյանը գտնում է, որ դատախազը պետք է պատճառաբանի ոչ թե արագացված կարգ կիրառելու դեմ առարկելը, այլ միայն չառարկելը: Դա պայմանավորված է նրանով, որ դատախազի առարկության դեպքում գործը քննվում է ընդհանուր կարգով, որի դեպքում լրիվ ծավալով գործում են արդարադատության սահմանադրական սկզբունքները, և լրիվ ծավալով իրականացվում է մեղադրանքի պաշտպանության սահմանադրական գործառույթը: Եվ այդ պայմաններում հեղինակն ավելի տրամաբանական է համարում, որ դատախազը պատճառաբանի ընդհանուր կարգից բացառությունը և ոչ թե ընդհանուր կարգը²:

Ընդունելով այս մոտեցման տրամաբանությունը՝ միաժամանակ կարծում ենք, որ հենց դատախազի առարկությունն է հանդես գալիս որպես մեղադրյալին օրենքով վերապահված իրավունքի իրականացման խոչընդոտ այն առումով, որ բացառում է վերջինիս համար համապատասխան բարենպաստ հետևանքների առաջացումը: Եվ այս պայմաններում մեղադրյալի իրավունքները սահմանափակում է արագացված կարգի դեմ դատախազի առարկելը և ոչ թե չառարկելը: Ըստ էության հենց այս մոտեցմամբ է առաջնորդվել ՀՀ Սահմանադրական դատարանը՝ մեկնաբանելով, որ արագացված կարգ կիրառելու դեմ դատախազության(մեղադրող կողմի) առարկությունը չի կարող դիտվել որպես «բացարձակ վետոյի» իրավունք՝ այդ առարկությունը պետք է լինի փաստարկված³:

Մեղադրական եզրակացությունում դատախազի առարկելը վերջնական չէ: ՀՀ քր. դատ օր-ի 375.1-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

¹ Տե՛ս Ա. Ղամբարյան., Արագացված դատական քննության դեմ առարկելու՝ դատախազի բացարձակ վետոյի սահմանադրականությունը. Գատական Իշխանություն, 2011, թիվ 4(141), էջ 53:

² Տե՛ս Ա. Ղամբարյան., Արագացված դատական քննության դեմ առարկելու՝ դատախազի բացարձակ վետոյի սահմանադրականությունը. Գատական Իշխանություն, 2011, թիվ 4(141), էջ 53:

³ Տե՛ս ՀՀ Սահմանադրական դատարանի ՍԳՆ 931 որոշումը ՀՀ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375.1-րդ հոդվածի 1-ին մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով. 28 դեկտեմբերի 2010թ, կետ 9:

մինչև դատաքննությունն սկսելը մեղադրողը դատարանի առաջարկությամբ կարող է իր դիրքորոշումը փոխել, թեպետ արագացված կարգ կիրառելու դեմ առարկել է մեղադրական եզրակացությունում:

Մինչև գործը դատարան ուղարկելը արագացված կարգի դեմ առարկելը կամ չառարկելը միանշանակ չի ընդունվում գրականության մեջ: Հ. Դուկասյանը և Գ. Մելքոնյանը նշում են, որ ի հեճուկս տրամաբանության՝ արագացված դատական քննություն կիրառելու հարցի վերաբերյալ «բանակցությունները» սկսվում են մեղադրանքի կողմի նախաձեռնությամբ և մինչև գործը դատարան ուղարկելը, ինչն անբարենպաստ վիճակի մեջ է դնում մեղադրյալին՝ հնարավոր չարաշահումներից խուսափելու կամ պաշտպանվելու առումով: Նրանք կարծիք են հայտնում, որ արագացված դատական քննություն կիրառելու հարցը կարող է բարձրացվել միայն դատարանում ամբաստանյալի նախաձեռնությամբ և դատախազի համաձայնությամբ՝ այդ գործընթացին դատարանի ակտիվ մասնակցության պայմանով¹:

Կարծում ենք՝ անհրաժեշտ է համաձայնել, որ նման առաջարկությունը միանշանակ բխում է հենց դատական քննության արագված կարգի էությունից: Այսպես, եթե մենք խոսում ենք դատական քննության արագացված կարգի՝ որպես մեղքի ընդունման գործարքի տարատեսակ չհանդիսացող ինստիտուտի մասին, ապա պետք է բացառենք դրա հիմքում գործարքի գոյությունը և՛ օրենսդրոթեն և՛ փաստացի: Այլ կերպ ասած՝ բացի այն, որ արագացված կարգի կիրառումը, այսինքն՝ դատավարական ձևի պարզեցումը, համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի, հիմնվում է մեղադրյալի ազատ կամահայտնության վրա, միջնորդության ներկայացման կարգի իրավական կարգավորումը պետք է բացառի դրա հիմքում նաև ոչ ձևական գործարքի առկայությունը, այսինքն՝ բացառի արագացված կարգ կիրառելու վերաբերյալ մեղադրյալի և մեղադրողի ներքին պայմանավորվածությունը: Արագացված կարգ կիրառելու միջնորդությունը՝ որպես դատական քննության փուլում դատավարական ձևի փոփոխման վերաբերյալ խնդրանք, պետք է ներկայացվի միայն դատարանում: Դատարանն էլ միջնորդությունը պետք է լուծի՝ բացահայտելով ինչպես մեղադրողի դիրքորոշումը, այնպես էլ այդ միջ-

¹ Տե՛ս Դուկասյան Հ., Մելքոնյան Գ.. Տարբերակված դատավարական ձևը և դրա առանձնահատկությունները, Պետություն և իրավունք, թիվ 1(35), 2007, էջ 36:

նորոգության դրական լուծման՝ օրենքով նախատեսված պայմանների առկայությունը:

Նշենք, որ, մեղադրյալի կողմից միջնորդություն ներկայացնելու պահի հետ կապված, մեր կողմից վերը քննարկված վիճահարույց մի շարք հարցերի կապակցությամբ բավական հստակ կարգավորում է առաջարկում ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի հայեցակարգը, որում սահմանվում է, որ համաձայնեցման վարույթ կիրառելու վերաբերյալ միջնորդությունը ներկայացվում է նախնական դատական լուծման փուլում և նույն փուլում էլ լուծվում է այն կիրառելու հարցը: Այսպիսի կարգավորումը ապահովում է հենց համաձայնեցման վարույթ կիրառելու հարցի բարձրացումը միայն դատարանում և դրա լուծումը դատարանի ակտիվ մասնակցությամբ:

Gevorg Baghdasaryan

*Post graduate researcher at the Chair of Criminal Procedure
and Criminalistics, YSU*

THE PROSECUTOR'S AGREEMENT AS A CONDITION OF ACCELERATED FORM OF JUDICIAL LITIGATION

The article is dedicated to one of the most important issues of the accelerated form of judicial litigation: the prosecutor's agreement as a condition of accelerated judicial litigation.

As a result of an appropriate analyze it is substantiated in the dissertation that it is necessary to define the circumstances determining the prosecutor's objection, in particular, having in mind, as examples, revealing the circumstances of the case, supporting to reveal of bonnets by the prosecutor, full compensation of a victim's injury, etc.

As a result of an appropriate analyze it is substantiated also in the article that the prosecutor must motivate not the agreement, but the objection against the accelerated form